

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1989 թ. Ապրիլի 21—29 օրերին Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական հրաւէրով պաշտօնական այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնւում Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գուրեգին Բ Կաթողիկոսը Ապրիլեան Մեծ Եղեռնի նահատակների յիշատակը հայրենիքում միասնաբար ոգեկոչելու համար:

Այս առիթով Նորին Սրբութեանը ուղեկցում էին Կիլիկեան Աթոռից Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսեանը, Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեանը, Տ. Սուրէն արքեպիսկոպոս Քւաթարոյեանը, Տ. Բարգէն աբեղայ Սարգիսեանը իբրե գաւազանակիր, ինչպէս նաև Կիլիկեան Աթոռի Ազգային Կենտրոնական Վարչութեան անդամներ՝ Տիարք Երուանդ Փամպուքեանը և Ոսկեբերան Արզումանեանը:

Ապրիլի 21-ին Տ. Տ. Գուրեգին Բ. Կաթողիկոսը իր շքախմբով ժամանեց Մայր Աթոռ, «Հրաշափառ»-ով առաջնորդուեց Մայր Տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առաջ նրան դիմավորեց և եղբայրաբար ողջունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 22-ին, շաբաթ օրը առաւօտեան, երկու Հայրապետները իրենց շքախմբերով պաշտօնական այցելութիւն տուեցին Հայաստանի Գերագոյն Խորհրդի նախագահութեան նախագահ Տիար Հրանդ Ոսկանեանին: Ջերմ մթնոլորտում Վեհափառ Հայրապետների և մեծարգոյ նախագահի միջև ծաւալուեց սրտբաց զրոյց Դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքների վերացման և Հայաստանի աւերուած շրջանների վերականգնման, հայրենիք-սփիւռք կապերի յետագայ սերտացման, ինչպէս նաև այդ ճանապարհին Հայ Եկեղեցու դերի բարձրացման և ողջ հայութիւնը յուզող այլ հարցերի մասին:

Նոյն օրը ժամը 14-ին «Արմենիա» հիւրանոցի դահլիճներից մէկում Խորհրդային Հայաստանի Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Տիար Ստեփան Վարդանեանը, ի պատիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի պատուիրակութեան, տուեց պաշտօնական ճաշկերոյթ: Ճաշկերոյթին ներկայ էին Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր շքախմբի անդամներով և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը իր շքախմբի անդամներով, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները, հայրենի և սփիւռքահայ մտաւորականներ ու այլ պաշտօնական անձինք:

Ապրիլի 23-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հոծ բազմութեան ներկայութեամբ ս. պատարագ մատուցեց և ոգեշունչ քարոզ խօսեց Նորին Սրբութիւն Տ. Տ. Գուրեգին Բ. Կաթողիկոսը:

Ապրիլի 24-ին, առաւօտեան ժամը 11-ին, երկու Հայրապետները մեծ շքախմբով և ծաղկեպսակներով բարձրացան Ծիծեռնակաբերդ՝ իրենց աղօթքը մատուցելու: Անմար կրակի շուրջ, բազմակուտակ ծաղիկների սուաջ, կատարուեց հոգեհանգստեան պաշտօն երկու միլիոն նահատակների հոգւոյ խաղաղութեան համար, ի ներկայութեան խուռներամ բազմութեան: Յաւարտ արարողութեան հայ նահատակների յիշատակը յաւերժացնող սրտի խօսք ասաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ծիծեռնակաբերդից Ս. Էջմիածին վերադառնալով, Վեհափառ Կաթողիկոսները ներկայ եղան Մայր Տաճարում մատուցուող սրբազան պատարագին, ապա հանդիսաւոր թափորով ուղղուեցին Մայր Աթոռի շրջափակում կանգնեցուած Եղեռնի յուշարձան, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, և հաւատացեալ ժողովրդին իր մխիթարանքի խօսքն ասաց Տ. Տ. Գարեգին Բ. Հայրապետը:

Ապրիլի 26-ին և 27-ին Տ. Տ. Վազգէն Ա. և Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսները իրենց շքախմբերով երկօրեայ ուխտագնացութեան մեկնեցին նորահաստատ Սիւնեաց թեմ և աղօթեցին Նորավանքի, Սիսիանի և Տաթևի պատմական եկեղեցիներում: Եղեգնաձորում, Սիսիանում և Գորիսում Մայր Աթոռի ու Կիլիկեան Աթոռի գահակալները արժանացան համաժողովրդական բացառիկ ջերմ ընդունելութեան և ամենուրեք բազմահազար հաւատացեալներին բաշխեցին իրենց հայրական պատգամն ու օրհնութիւնները:

Հայաստանում գտնուելու օրերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի պատուիրակութիւնը, Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի գլխաւորութեամբ, եղաւ Երեւանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում, Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում, այցելեց Հայաստանի աղետեալ շրջանները, ինչպես նաև գործարար բանակցութիւններ վարեց Հայաստանի Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ Տիար Լևոն Սահակեանի հետ, վերաշինութեան ծրագրերի առնչութեամբ:

Ապրիլի 29-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը, հրաժեշտ տալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, իր շքախմբով մեկնեց Մոսկուա, ուր հետևեալ օրը, կիրակի, Ապրիլի 30-ին, հին տոմարով տօնուող Ս. Զատկի առթիւ քարոզեց Մոսկուայի հայոց Ս. Յարութիւն եկեղեցում:

Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի սոյն այցելութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածին պատմական առիթ հանդիսացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջև ստեղծելու եկեղեցաշէն առաւել համագործակցութեան մթնոլորտ, որպէս յուսալի երաշխիք և նոր հանգրուան Հայ Եկեղեցու ներքին միութեան ամրապնդման և համազգային միասնութեան:

Յաւարտ սոյն պատմական այցելութեան երկու Հայրապետները ստորագրեցին համատեղ մի հաղորդագրութիւն, որ առանձին լոյս կը տեսնի մամուլում:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
8 մայիս 1989 թ.